ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԱՐԳԵՒ ՇԱՀԲԱԶԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Ցարգարժան Պրն Շահբազեան,

Ուրախ ենք Հայրապետական Մեր գնահատանքի խօսքը յղել Ձեզ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ մշտապէս դրսեւորած Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի եւ մատուցած բազմարդիւն ծառայութիւնների համար: Շուրջ չորս տասնամեակ Դուք Հայոց լեզու եւ Հայ գրականութիւն դասաւանդեցիք Մայր Աթոռիս Հոգեւոր Ճեմարանում, ստանձնեցիք վարչական պատասխանատուութիւններ՝ անմիջական աջակից լինելով երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետին, ով Ձեր կուրծքը զարդարեց «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանով: Մենք սիրով ենք յիշում Հոգեւոր Ճեմարանում Մեր ուսումնառութեան տարիները, երբ աշակերտելով Ձեզ, ականատեսն էինք մանկավարժական Ձեր նուիրեալ ջանքերին եւ մայրենի մեր լեզուի նկատմամբ Ձեր նախանձախնդրութեանը, մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր որդիական սիրուն, ինչը ներշնչող եւ քաջալերող էր կրթօջախի սաներիս համար:

Որպէս հմուտ լեզուաբան, Վազգէն Ա Հայրապետի հրաւէրով Դուք կարեւոր մասնակցութիւն բերեցիք Նոր Կտակարանի արեւելահայերէն թարգմանութեան եւ Աստուածաշնչի թարգմանութեան խմբագրման աշխատանքներին: Ձեր եւ Ձեզ գործակից մտաւորականների արդիւնաւոր ծառայութեամբ Նոր Կտակարանը, իսկ յետոյ նաեւ Սուրբ Գիրքն ամբողջութեամբ առաջին անգամ հրատարակուեցին արդի արեւելահայերէնով՝ հոգու մխիթարութիւն պարգեւելով հաւատաւոր հայորդիներին եւ նպաստելով նրանց հաւատքի զօրացմանը:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Գեւորգեան Հոգեւոր Ճեմարանի հիմնադրման 130-ամեայ յոբելեանի առիթով Հայրապետական այսու Սրբատառ Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք եւ բարի գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 3-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 270